Կազմված է «29» ապրիլ, 2022թ.

Տպագրված է ընդամենը 2 (երկու) օրինակից

Օրինակ 2

Բաղկացած է՝ 9 (ինը) թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Իրական դպրոց Գորիս»

Հիմնադրամի

Հիմնադիրների «29» ապրիլի 2022թ.
որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

«11» «05» 2022թ.

Գրանցման համար՝ 222.160.1236697

ՀՎՀՀ՝ 09219712

աշխատակից

Հիմնադրամի գործադիր տնօրեն՝
Արտուր Խաչաբաղյան

«ԻՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԳՈՐԻՍ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Իրական դպրոց Գորիս» Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների (այսուհետ՝ Հիմնադիրներ) կողմից կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, մշակութային, գիտական, կրթական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնադրվել է 2022 թվականի ապրիլի «29»-ի Հիմնադրամի հիմնադիրների որոշմամբ և գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, իրավական այլ ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

2. Հիմնադրամի գործունեությունը հիմնված է օրինականության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքների վրա:

3. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հիմնադրամը կարող է գործել օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Հիմնադրամի անվանումն է"

   1) հայերեն՝ «Իրական դպրոց Գորիս» Հիմնադրամ
   2) անգլերեն՝ Foundation «Real School Goris»
   3) ռուսերեն՝ Фонд «Реальная школа Горис»

5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք" Գորիս, Անկախության 114:

6. Հիմնադրամի Հիմնադիրներն են՝

   1) Շուշան Բաբախանյան (քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, անձնագիր՝ AR0670706, տրված՝ 032, 26.04.2018թ"-ին, ծննդյան ամսաթիվ՝ 18.02.1992թ., ՀԾՀ 6802920123, հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք" Գորիս, Արցախյան խճուղի, շենք 10, բն, 15),

   2) Հայկ Հակոբյան (քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, անձնագիր՝ AN0767425, տրված՝ 012, 24.12.2013թ"-ին, ծննդյան ամսաթիվ՝ 18.10.1989թ., ՀԾՀ 2810890968, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փ. 50 շենք, բն. 29):

7. Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իրենց կողմից ստեղծված Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր Հիմնադիրների պարտավորությունների համար:

8. Հիմնադրամը պարտավոր է Օրենքով սահմանված կարգով հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին:

9. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով), դրոշմներ և ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացնող այլ միջոցներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայասատանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

10. Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների

համար պատասխանատու է այդ գույքով: Հիմնադրամը կարող է իր անունից կնքել գործարքներ, պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

11. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ տնօրինում, օգտագործում և տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

12. Հիմնադրամը կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

13. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով:

14. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը:

15. Հիմնադրամը կանոնադրությամբ թվարկված նպատակները հետապնդելիս կարող է անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) կրթական ծրագրերի, այդ թվում հատուկ, ընդհանուր, միջին մասնագիտական և բարձրագույն միջին մասնագիտության կրթական ծրագրերի իրականացում, ուսուցման կենտրոնների գործունեություն, դասընթացների կազմակերպում:

2) հետազոտություններ և մշակումներ տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության ոլորտներում

3) գրքերի, ամսագրերի և այլ պարբերականների հրատարակում, հրատարակչական գործի այլ տեսակներ"

4) կրթության բոլոր ոլորտներում կրթական ծրագրերի կազմակերպում, կրթության և այլ հարցերով խորհրդատվական գործունեության իրականացում:

5) կրթության ոլորտի տարբեր ճյուղերի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում,

6) առևտրային ցուցահանդեսների, տոնավաճառների, կազմակերպում՝ կրթության, պաշտպանության, արվեստի, մշակույթի, SS ոլորտներում,

7) վեբ-պորտալների հետ կապված գործողություններ,

8) S<S կրթության բարելավման կրթական ծրագրերի և գործունեության իրականացում,

9) իր սեփականություն հանդիսացող գույքը տրամադրել վարձակալական հիմունքներով,

10) կրթական, ճանաչողական, գիտական, հայրենագիտական արշավների կազմակերպում:

16. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործունեության տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

17. Հիմնադիրների կողմից՝ Հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է:

18. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ անշարժ և շարժական գույք, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ:

19. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող ու իր կողմից ձեռք բերված գույքն իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

20. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցների, գոյացման աղբյուրներն են՝

1) Հիմնադիրների կողմից իրականացվող ֆինանսական և (կամ) նյութական (նաև անշարժ և շարժական գույքի տեսքով) ներդրումները,

2) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները,

3) դրամաշնորհները,

4) օրենքով չարգելված այլ աղբյուրները:

21. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի հիմնադիրները, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

22. Հիմնադրամի առաքելությունն է նախագծել և կառուցել «Իրական դպրոց Գորիս» կրթական համակարգը Գորիսի տարածաշրջանում՝ հնարավորություն տալով 15-21 տարիքային խմբի անձանց ձեռք բերել քաղաքացիական, ռազմագիտական եւ մասնագիտական արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նախնական փորձ, հմտություններ և գիտելիք՝ այդ ամենը ստանալով սեփական շրջանում ապրելով, սովորելով եւ հանրօգուտ աշխատանք կատարելով:

23. Հիմնադրամի նպատակներն են՝

- Նպատակադրում. նպաստել մի քանի տարվա կամ նույնիսկ մի քանի տասնամյակի նպատակադրման՝ անելիքները ծրագրելու, խնդիրները գիտակցելու, լուծումները ձևակերպելու եւ իրականացումը ստանձնելու համար անհրաժեշտ հմտությունների, գիտելիքների եւ կամային հատկանիշների ձեռքբերմանը:
- Հայրենաճանաչում. ճանաչել սեփական երկրի պատմությունը, աշխարհագրությունը, ժողովրդագրությունը, մշակույթը և գաղափարախոսությունը: Սեփական նպատակների և առաքելության կատարումը կապակցված տեսնել սեփական երկրի զարգացման և խնդիրների լուծման հետ:
- Աշխարհաճանաչում. համաշխարհային պատմության, քաղաքակրթությունների, մշակույթի, արվեստի, հասարակագիտական և տնտեսական, համաշխարհային և տարածաշրջանային համայնապատկերի մասին գիտելիքների ձեռքբերում՝ ազնվականին պատշաճ մակարդակով:
- Առողջ հոգի և մարմին. ապահովել ֆիզիկական և հոգեբանական պատրաստություն, ծանոթացնել զինծառայության, քաղաքացիական պաշտպանության, առաջին բուժօգնության հիմունքներին: Պաշտպանված լինել և տիրապետել քարոզչության և հոգեբանական պատերազմի միջոցներին,

տեղեկատվական անվտանգությանը, տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի այլ մարտահրավերներին:

- Պաշտպանությունից ընդլայնում. ապահովել շարունակական ընդլայնում և զարգացում, այլ ոչ թե սևեռվել զուտ գոյատևման և պաշտպանության խնդիրների վրա: Ընդլայնողական մոտեցումներն ու աշխարհայացքը հիմք դարձնել սեփական գործի, ընտանիքի, սեփական պետության, մշակույթի, աշխարհայացքի, փիլիսոփայության կատարելագործման եւ տարածման ուղղությամբ:
- Մասնագիտացում. նպաստել ընտրած ուղղությամբ մասնագիտական հմտությունների զարգացմանը, 19 տարեկանից (տղաների դեպքում՝ 21 տարեկանից) պատրաստ լինել սկսելու սեփական գործը կամ մտնել աշխատաշուկա՝ որպես մասնագետ, որն արդեն ունի կատարած իրական նախագծեր և իրական աշխատանքային ու ձեռնարկատիրական փորձ:
- Շարունակական կրթություն. շրջանավարտների սատարում ընտրած և հարակից մասնագիտական գիտելիքների եւ հմտությունների շարունակական զարգացման գործում, գիտական աշխատանքներ եւ տիտղոսների նվաճելու ճանապարհին: Ձեռնարկատիրության սատարում՝ կազմակերպչական եւ դրամական միջոցներ ներգրավելու, այլ կառույցների, գործընկերների, ցանցերի հետ կապի հաստատման եւ այլ առումներով:

24. Հիմնադրամը իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար կազմակերպում է գիտաժողովներ, մասնագիտական քննարկումներ, ցուցահանդեսներ, մրցույթներ և այլ համաժողովներ, իրականացնում ծրագրեր և նախագծեր:

Հիմնադրամը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների և կազմակերպությունների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և ուսումնական հաստատությունների հետ:

25. Հիմնադրամի հնարավոր շահառուների խմբերն են՝

1) «Իրական դպրոց Գորիս» հիմնադրամի աշակերտները.
2) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ուսանողներ և ինժեներները.
3) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունները.
4) մշակույթի, արվեստի, կրթության, գիտության, պաշտպանության բնագավառներում գործող տեղական, տարածաշրջանային և միջազգային զարգացումների վերաբերյալ հետազոտություններ իրականացնող, գիտելիքներ տարածող կամ լուսաբանող գիտական, կրթական և լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպություններ, ինչպես նաև այդ ոլորտներում մասնագիտացող, մասնագիտացված և գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք և կազմակերպությունները.
5) գիտական և կրթական հաստատությունները:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6. Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և Հիմնադրամի գործադիր տնօրենը: Հիմնադրամում կարող են ստեղծվել և գործել կոլեգիալ այլ մարմիններ, այդ թվում հիմնադրամի հանձնաժողովներ կամ խորհուրդներ:

7. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ նաև՝ Խորհուրդ):

8. Խորհուրդը բաղկացած է 7 (յոթ) անդամից, որոնք իրենց կազմից ընտրում են Խորհրդի նախագահին:

9. Խորհրդի կազմը կազմավորվում է ուղղակիորեն Հիմնադրամի Հիմնադիրների կողմից՝ միաձայն որոշմամբ: Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում են (3) երեք տարի ժամկետով:

. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է Օրենքով և (կամ) սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է հոգաբարձուների խորհրդի քվեարկությամբ (Խորհրդի մնացած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ), ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին գործադիր տնօրենի տեղեկությունը ստանալու օրվանից հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում:

. Խորհրդի նոր անդամի ընտրության համար թեկնածու կարող են առաջադրել Հիմնադիրները, հոգաբարձուների խորհրդի անդամները, Հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամները, հիմնադրամին նվիրատվություն կատարած անձինք:

. Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 (տասն) օրվա ընթացքում Հիմնադրամի գործադիր տնօրենը պատշաճ կերպով (գրավոր/պատվիրված նամակով/էլեկտրոնային ցանկացած եղանակով) տեղեկացնում է Հիմնադրամի հիմնադիրներին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է Օրենքով նախատեսված դեպքերում:

. Խորհրդի անդամի լիազորությունը կարող է դադարել նաև նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4 -ով:

36. Հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են.

1) հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

2) հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության եռամսյակների սահմանումը.

3) հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) հոգաբարձուների խորհրդի նախագահի, կառավարչի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

10) հիմնադրամի՝ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.

11) Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

12) տարին մեկ անգամ գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը.

13) Օրենքով սահմանված այլ իրավասություններ:

7. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

8. Խորհուրդը վերահսկում է Հիմնադրամի գույքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների նպատակային գործադրման նկատմամբ, ինչպես նաև իրականացնում է հսկողություն Հիմնադրամի գործադիր տնօրենի գործունեության նկատմամբ:

9. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Առանձին դեպքերում Խորհրդի որոշումներն ընդունվում են էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև

հարցման կարգով: Նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են Խորհրդի ադամների 1/3-ի պահանջով՝ Հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք: Խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին:

40. Խորհուրդն ընդունում է որոշումներ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի ընտրության և ազատման, գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի լուծարման, Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

41. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

42.Խորհրդի արձանագրությունները կազմվում են հայերեն, սակայն դրանք կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

43. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները Խորհրդի կազմից: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

44. Խորհրդի նախագահի իրավասությունները ՝ կազմակերպում է խորհուրդի աշխատանքները, գումարում է խորհուրդի նիստերը եւ նախագահում դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, խորհուրդի քննարկմանն է ներկայացնում խորհուրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ՝ Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

45. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

46. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Օրենքին, սույն կանոնադրությանը և իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

47. Հիմնադրամի զարգացման և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց Հիմնադրամի Խորհրդի կողմից կարող են շնորհվել Խորհրդի պատվավոր անդամի կոչումներ՝ հոգաբարձուների խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

5.ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից Հիմնադրամի միջոցների օգտագործման մասին,

2) Հիմնադրամի աշխատանքները բարելավելու նպատակով նրա կառավարման մարմիններին ներկայացնելու առաջարկություններ,

3) նախապատրաստելու և հիմնադրամի Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

5) տեղեկատվություն ստանալու Հիմնադրամի գործունեության մասին,

6) դուրս գալ Խորհրդի կազմից:

49. Խորհրդի անդամը պարտավոր է՝
1) մասնակցել Հիմնադրամի Խորհրդի նիստերին,
2) իր պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից:
50. Խորհրդի անդամը կարող է ունենալ Օրենքով, սույն կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով սահմանված այլ իրավունքներ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

51. Հիմնադրամի գործադիր մարմինը Հիմնադրամի գործադիր տնօրենն է, որը ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը և հաշվետու է Խորհրդին:

52. Հիմնադրամի գործադիր տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդն իր ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

53. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

54. Խորհուրդն իրավասու է լուծելու գործադիր տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

55. Հիմնադրամի գործադիր տնօրենի իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով և սույն կանոնադրությամբ:

56. Գործադիր տնօրենը.
1) տնօրինում է Հիմնադրամի գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները՝ համաձայն Խորհրդի հաստատված բյուջեի,
2) գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից,
3) տալիս է լիազորագրեր, գործում է առանց լիազորագրի,
4) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկյա պետություններում,
5) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է իր տարեկան հաշվետվությունները,
6) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափը,
7) կատարում է աշխատանքի բաշխում Հիմնադրամի աշխատողների միջև,
8) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
9) Խորհրդի հաստատմանը ներկայացնել Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը
10) բանկերում բացում է Հիմնադրամի հաշիվներ,
11) Կանոնադրությամբ կարող են սահմանվել Գործադիր տնօրենի նաև այլ իրավասություններ:
57" Գործադիր տնօրենը պարտավոր է՝
1) Հիմնադրամի գույքը տնօրինելիս հանդես գալ Հիմնադրամի շահերից, ինչպես նաև խնայողաբար օգտագործել Հիմնադրամի ֆինանսական միջոցները և այլ գույքը,
2) Խորհրդի պահանջով ներկայացնել հաշվետվություն Հիմնադրամի գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

58. Հիմնադրամի կողմից Օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Պետական Եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմիններ՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

59. Օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով Հիմնադրամը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն:

60. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում ու վարվում, հաշվապահական հաշվետվությունը կազմվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

61. Հիմնադրամը պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին՝ Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

62. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:
Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ: Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատարվել նաև Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

Վերակազմակերպումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

63. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
64. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

65. Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, ընդ որում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Սոնա Խաչատրյանի կարգադրությամբ
Գրասենյակի պարտականությունները կատարող
Գրիգորի /Հակոբ/